ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
28.09.2022թ. N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-22/01» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 07» դեկտեմբերի 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ռափյանի (այսուհետ՝ Կապալառու), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 28.09.2022թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-22/01» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին, չգերազանցելով Պայմանագրի ընդհանուր գնի տասը տոկոսը, ավելացնել Պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալները՝ **255 146.4 (երկու հարյուր հիսունհինգ հազար մեկ հարյուր քառասունվեց դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ** գումարով, ինչով պայմանավորված.

1.1. Պայմանագրի 5.1 կետում «**4 800 000 (չորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**» բառերը փոխարինել «**5 055 146.4 (հինգ միլիոն հիսունհինգ հազար մեկ հարյուր քառասունվեց դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ, որից 842 524.4 (ութ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր քսանչորս դրամ քառասուն լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**» բառերով,

1.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքների լրացուցիչ ծավալների մասով հաստատել ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի,

1.3. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիր կնքելը 14.11.2022թ.-ից Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև Համաձայնագիր կնքելը Կապալառուի կողմից կատարված աշխատանքների (լրացուցիչ ծավալների) դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 4 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ, Գր. Լուսավորիչ փ. 2-րդ նրբ., տ. 9
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 05550663
Հ/Հ՝ 900011025757, 900011192151	Հ/Հ՝ 1570068301190100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Ա. Ռափյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	

Հավելված N 1
«07» դեկտեմբերի 2022թ. կնքված N 1 համաձայնագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ /ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ/ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը** /ՀՀ դրամ/	Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
2	Պատերի մասնակի մաքրում յուղաներկա ծածկույթից	մ^2	50.80	400	20320
4	Առաստաղների մաքրում հին ներկածածկույթից	մ^2	46.50	400	18600
15	Պատերի ներկում յուղաներկով	մ^2	83.54	1300	108602
17	Առաստաղների ներկում լատեքսային ներկով	մ^2	46.50	1400	65100
	Ընդամենը				**212622**
	ԱԱՀ 20%				**42524.4**
	Ընդհանուրը				**255146.4**

*Կապալառուն աշխատանքները կատարում է <u>ք. Արթիկ, Բաղրամյան 40 հասցեում</u>:

**Միավորի արժեքի մեջ ներառվում են բոլոր ծախսերը և շահույթը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757, 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ,
Գր. Լուսավորիչ փ. 2-րդ նրբ., տ. 9
ՀՎՀՀ՝ 05550663
Հ/Հ՝ 1570068301190100
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ

Տնօրեն՝ Վ. Իսրայելյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«07» դեկտեմբերի 2022թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
ՀՀ՝ 900011025757						
1	45461100/15	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արթիկ քաղաքի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/	4 800 000	4 800 000	4 800 000	**4 800 000**
ՀՀ՝ 900011192151						
1	45461100/22	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արթիկ քաղաքի նստավայրի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ/			255 146.4	**255 146.4**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դպրական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011025757, 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Արթիկ,
Գր. Լուսավորիչ փ. 2-րդ նրբ., տ. 9

ՀՎՀՀ՝ 05550663

Հ/Հ՝ 1570068301190100

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ

Տնօրեն Ա. Իսայան

/ստորագրություն/

Կ.Տ